



N 21-10
05.03.2021

ՀՀ արդարադատության նախարար՝
պարոն Ռուստամ Բադալյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Բադալյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ հանդիպել են դատապարտյալ Արմեն Մարտիրոսյանին¹: Այցի պահին վերջինս ստացիոնար բուժում էր ստանում ՔԿՀ բուժմասում: Խմբի անդամներին Ա.Մարտիրոսյանը հայտնել է, որ 2021թ. փետրվարի 10-ին իր ինքնազգացողությունը վատացել է, բարձրացել է ճնշումը, կատարվել է էլեկտրասարտագրություն, որոշել են իրեն տեղափոխել Էջմիածին քաղաքի բժշկական կենտրոն: Այնտեղ նա մնացել է մոտ 20 րոպե, կրկին հետազոտել են սիրտը, որոշել են չպահել հիվանդանոցում, այլ տեղափոխել ՔԿՀ: Նույն օրը, երբ վերադարձել է, նկատել է, որ ՔԿՀ հերթափոխի պետը, ում անունը իր պնդմամբ Ա. Մանվելյան է, իր հետ կանգնած աշխատակիցներին ասել է՝ «խոշտանգման գործով կոլեգաների դեմ ցուցմունք է տվել, այնպես խուզարկեք, որ խելքը գլուխը գա»: Ըստ Ա. Մարտիրոսյանի խուզարկությունը տեղի է ունեցել հանդիպումների սենյակում, իրեն ամբողջությամբ մերկացրել և խուզարկել են, սակայն ոչինչ չեն գտել: Խուզարկելիս իրեն բացահայտ ասել են, որ խուզարկում են, որովհետև ինքն է կազմակերպել իր՝ քաղաքացիական հիվանդանոց տեղափոխումը, որպեսզի վերադառնալիս իր հետ թմրանյութ ներս բերի ՔԿՀ: Ա.Մարտիրոսյանի պնդմամբ, նման ստորացուցիչ կերպով կատարված խուզարկությունը օգտագործվել է իր դեմ, քանի որ ինքը ոստիկանության աշխատակիցների դեմ ցուցմունք է տվել: Նշել է նաև, որ խուզարկության ընթացքում ուժ չեն գործադրել, վիրավորական արտահայտություններ չեն հնչեցրել: Սակայն, երբ իրեն ուղեկցած աշխատակիցները հերթափոխի պետին հայտնել են, որ ինքը միայնակ չի մնացել և որևէ սենյակ չի մտել, Ա. Մանվելյանը նրանց պատասխանել է՝ «հե՜սա իրա վրայից հանենք, ձեր վրա ա մնալու»:

Հարցը քննարկվել է հիմնարկի պետի հետ, վերջինս հայտնել է, որ խուզարկությունը կատարվել է օրենսդրությամբ սահմանված կարգով, ճիշտ է՝ Ա. Մարտիրոսյանի մոտ թմրանյութ չեն հայտնաբերել, սակայն իր մոտ հայտնաբերել են արգելված իր՝ հեռախոս:

¹ 2019թ. նոյեմբերի 21-ին համացանցում տարածվել էր տեսանյութ հետևյալ վերնագրով՝ ««Ոստիկանները՝ հակազգազով ու մահակով ցուցմունք են կորզում»», որտեղ մի քանի անձ հակազգազ են հագցնում մեկ այլ անձի և բռնություն գործադրում վերջինիս նկատմամբ: Հիշյալ հրապարակման վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ: Նշված գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել ՀՀ Ոստիկանության Ճամբարակի բաժնի պետ Ն.Ս.-ին և Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Վ. Ն.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով: Արմեն Մարտիրոսյանը հանդիսանում է հենց այն անձը, ում նկատմամբ դրսևորվել է բռնություն: Տեսանյութը տես <https://www.youtube.com/watch?v=v02LR65miaU> հղումով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է խտրականության արգելքը, ըստ որի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ կառավարության 03.08.2006թ. N 1543-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի երրորդ պարբերության համաձայն՝ անձնական խուզարկությունը կատարվում է անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելու սկզբունքով՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ տվյալ դեպքում անձին ամբողջությամբ մերկացնելով խուզարկություն կատարելը հանդիսանում է անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Նման տարբերակված մոտեցումը չունի օբյեկտիվ հիմնավորում, այն հանդիսանում է հետապնդում անձի նկատմամբ՝ այն հիմքով, որ նա հայցել է իրավական պաշտպանություն: Այս հանգամանքը հաստատվում է նաև ՔԿՀ հերթափոխի պետ Ա. Մանվելյանի հայտարարությամբ:

Նշվածի կապակցությամբ խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Արմեն Մարտիրոսյանի իրավունքները վերականգնելու, ինչպես նաև հետագայում խտրականության դրսևորումները բացառելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Արայիկ Զայյան